

## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

Ա-ն 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>7</sup>-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակվել է 5.000 ՀՀ դրամ տուգանք այն բանի համար, որ Ա-ն իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը, կայանել է վճարովի ավտոկայանատեղում, սակայն չի կատարել կայանատեղիի համար սահմանված տեղական տուրքի վճարումը:

Ա-ն վարչական կարգով 01.07.2018 թվականին բողոքարկել է վարչական տույժ նշանակելու մասին 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշումը:

Վարչական բողոքի քննարկման արդյունքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի (այսուհետ՝ Ծառայության պետ) 02.08.2018 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-52/5252 որոշմամբ ներկայացրած բողոքը մերժվել է՝ անփոփոխ թողնելով 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշմամբ կայացրած վարչական ակտը, այն պատճառաբանությամբ, որ վերջինս հիմնավոր է և ենթակա է կատարման:

30.08.2017 թվականին Ա-ն դատարան ներկայացրած հայցադիմումով պահանջել է վերացնել 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշման բողոքարկման արդյունքում Ծառայության պետի կողմից 02.08.2018 թվականի «Վարչական բողոքի մասին» թիվ Վ-52/5252 որոշումը:

Երևանի քաղաքապետարանը 10.09.2018 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որով առարկել է ներկայացրած պահանջի դեմ, նշելով, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ. 29.02.2018 թվականի կատարված տեսագրության ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ Ա-ին պատկանող տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը բերված է եղել անշարժ վիճակում վճարովի ավտոկայանատեղում: Դրանով հաստատվել է այն հանգամանքը, որ Ա-ին պատկանող տրանսպորտային միջոցով կատարել է 9 րոպե տևողությամբ կայանում: Ա-ն չի վճարել տեղական տուրքը, ինչն էլ հիմք է հանդիսացել 5000 դրամի չափով տուգանքի առաջացման համար:

Դատարանը սույն գործով նշանակել է նախնական դատական նիստ:

Ա-ն դատարան է ներկայացել իր ներկայացուցիչ Բ-ի հետ՝ նպատակ ունենալով վերջինիս լիազորությունները հաստատել դատարանի առջև՝ բանավոր սահմանելով

դրանց ծավալը: Դատարանը թույլ չի տվել Բ-ին իրականացնել ներկայացուցչություն այն պատճառաբանությամբ, որ փաստաբան չհանդիսացող ֆիզիկական անձինք կարող են ներկայացուցչություն իրականացնել միայն նոտարի կողմից վավերացրած լիազորագրով, որով հաստատվում է նաև փաստաբան չհանդիսացող անձի կողմից ներկայացուցչությունը պարբերաբար և վճարովի հիմունքներով չիրականացնելու փաստը:

Դատարանը նախնական դատական նիստի ընթացքում հայցվորին առաջարկել է հայցապահանջը ճշգրտել՝ ներկայացնելով 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշումը վերացնելու պահանջ: Հայցվորը համաձայնել է:

Հաջորդ նախնական դատական նիստում Դատարանը բաշխել է ապացուցման բեռն՝ Ա-ի վրա դնելով իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը վճարովի ավտոկայանատեղում կայանած չլինելու փաստը ապացուցելու պարտականությունը:

Հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել:

Հիմք ընդունելով այն, որ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները կրում է այն ապացուցելու բեռը կրող կողմը և հիմք ընդունելով այն, որ տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը վճարովի ավտոկայանատեղում կայանած չլինելու փաստը ապացուցելու պարտականությունը կրում է հայցվորը, դատարանը մերժել է հայցապահանջը:

## ՀԱՐՑԵՐ

### ՀԱՐՑ 1

Հիմնավոր էր արդյոք տվյալ դեպքում թույլ չտալ Բ-ին իրականացնել ներկայացուցչություն:

### ՀԱՐՑ 2

Արդյոք հիմնավոր էր հայցապահանջը ճշգրտելու վերաբերյալ դատարանի առաջարկը:

Հիմնավորե՞ք պատասխանը՝ անդրադառնալով այն բոլոր հետևանքներին, որ կարող էր առաջանալ, եթե հայցապահանջը չհստակեցվեր:

### ՀԱՐՑ 3

Տվյալ դեպքում, Հայցվորի կողմից, 30.08.2017 թվականին՝ 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշումը վերացնելու հայցապահանջ ներկայացնելով, չի խախտվել արդյոք Վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված հայց ներկայացնելու ժամկետը:

#### **ՀԱՐՑ 4**

Ճիշտ էր բաշխվել արդյոք դատարանի կողմից ապացուցման բեռը: Հիմնավորե՞ք պատասխանը: Նման ապացուցման բեռի բաշխման պայմաններում՝ քննարկե՞ք ex officio սկզբունքի կիրառման հնարավորության հարցը՝ դատարանի կողմից ապացույցներ պահանջելու համատեքստում:

#### **ՀԱՐՑ 5**

Համեմատե՞ք տվյալ իրավական խնդրում և ստորև ներկայացված ռաստական հանգամանքներում դատավորի գործողությունները: Նշե՞ք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև ex officio սկզբունքի կիրառմամբ դատարանի կողմից ապացույցներ պահանջելու համատեքստում անդրադարձե՞ք ստորև շարադրված իրավիճակում դատարանի որոշման իրավաչափությանը: Հիմնավորե՞ք պատասխանը:

#### **ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

(...) Դատարանը նախնական դատական նիստի ընթացքում հայցվորին առաջարկել է հայցապահանջը ճշգրտել՝ ներկայացնելով 01.04.2018 թվականի թիվ Վ-71/7171 որոշումը վերացնելու պահանջ: Հայցվորը համաձայնել է:

Հաջորդ նախնական դատական նիստում Դատարանը բաշխել է ապացուցման բեռն՝ Երևանի քաղաքապետարանի վրա դնելով Ա-ին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը վճարովի ավտոկայանատեղում կայանած լինելու փաստը ապացուցելու պարտականությունը:

Պատասխանողը որևէ ապացույց չի ներկայացրել (այդ թվում, չի ներկայացրել հայցադիմումի պատասխանում վկայակոչած 29.02.2018 թվականին կատարած տեսագրությունը):

Հիմք ընդունելով այն, որ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները կրում է այն ապացուցելու պարտականություն ունեցող կողմը և հիմք ընդունելով այն, որ տրանսպորտային միջոցը 29.02.2018 թվականին՝ ժամը 17:16-ից մինչև ժամը 17:25-ը վճարովի ավտոկայանատեղում կայանած լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը, ով թեև վկայակոչել է այդ փաստը հաստատող ապացույցի գոյությունը, սակայն չի ներկայացրել այն՝ դատարանը բավարարել է հայցապահանջը: